ԳԹՈՒԹՅԱՆ ԱՎԻԱԿԱՄՈՒՐՋ

ՎԱՐԴԵՆԻՍ: Շրջկենտրոնի օդանավակայանից դեպի Արցախ կանոնավոր չվերթեր են կատարում քաղաքացիական ավիացիայի հայկական վարչության Մի—8 մակնիշի ուղղաթիռները: Դրանց միջոցով շրջափակման մեջ գտնվող արցախահայությանն է հասցվում հանրապետության աշխատավորների օգնությունը: Այդ նպատակով ԼՂՄ և Շահումյանի շրջան, ինչպես նաև Գետաշենն ուղարկվում է պարենամթերք՝ ալյուր, շաքար, կարտոֆիլ և այլ ապրանքներ:

Վարդենիսի օդանավակայանից օգնությունը մեր հայրենակիցներին ուղարկում են Մարտունու, Կրասնոսելսկի, Էջմիածնի, Արարատի, Թալինի, Արտաշատի ու Երևանի տասնյակ ձիմնարկ-ձեռնարկություններ ու կազմակերպություններ:

Վարդենիսի աշխատավորներն ստանձնել են Մարտակերտի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի բնակչությանը սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության ապրանքներով օժանդակելու շնչությունը: Ի դեպ, երբ նոր էր բացվել ավիագիծը, Շահումյանի շրջանի Ենիքենդի հողագործները, որոնք չատ են տուժել երաշտից, խնդրեցին վարդենիսցիներին օգնել աշնանացանի սերմացուով: Նրանց անմիջապես արձագանքեցին Զառիենդի ու Զոդի խորհրդտնտեսությունների աշխատավորները, որոնք իրենց անեցրած բերքից Ենիքենդ առաքեցին 60 ցենտներ բարձրորակ սերմացու: Շնչության նման բարի օրինակներ են ցույց տալիս նաև Մարտունու հացաբխման կոմբինատը, Արարատարդշին կազմակերպությունը և այլն:

Ավիագծի բացման հենց առաջին օրերից արցախահայությանն սպասարկող յուրատեսակ շտապօգնության մեքենա է դարձել հայկական ավիավարչության՝ Մուշեղ Ենգոյանի հրամանատարությամբ թռչող ուղղաթիռը: Միայն նրա ուղղաթիռով Արցախի շուրջ 30 լեռնային դժվարամատչելի բնակավայրեր են փոխադրվել ավելի քան 150 տոննա ալյուր և այլ մթերքներ:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի թղթ.)